

Արձանագրություն N 1

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2017 թվականի մարտի 3-ի նիստի

Նախագահում էր՝

ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը:

**Մասնակցում էին
կոլեգիայի անդամներ՝**

Արմեն Հարությունյանը, Հ.Ասլանյանը, Դ.Մելքոնյանը,
Արտավազ Հարությունյանը, Վ.Մուրադյանը, Արտակ
Հարությունյանը, Ա.Մարությանը, Գ.Բաղդասարյանը,
Վ.Ռաֆայելյանը, Գ.Պողոսյանը, Ե.Ավագյանը,
Ր.Ասլանյանը:

Ներկա էին՝

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և
տնտեսական գործունեության դեմ ուղղված
հանցագործությունների գործերով վարչության պետ
Տ.Ամբարյանը, ՀՀ գլխավոր դատախազության ԱԱ
մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի
շրջանառության հետ կապված և
կիրեռհանցագործությունների գործերով վարչության
պետ Ա.Փանոսյանը, ՀՀ դատախազության
աշխատակազմի ղեկավար Հ.Նավասարդյանը, ՀՀ
դատախազության ավագ դատախազները, ՀՀ
զինվորական դատախազի տեղակալ Ա.Սարգսյանը,
մարզերի, Երևան քաղաքի վարչական շրջանների և
կայազորների զինվորական դատախազները, ՀՀ
գլխավոր դատախազի խորհրդականները և օգնականը:

Հրավիրվել և կոլեգիայի նիստի օրակարգի 1-ին հարցի քննարկմանը մասնակցում էին՝ ՀՀ
ԿԱ ոստիկանության պետի առաջին տեղակալ Հ.Պողոսյանը, ՀՀ հատուկ քննչական
ծառայության պետի տեղակալ Վ.Հովհաննիսյանը, ՀՀ քննչական կոմիտեի տարածքային
քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետ
Թ.Պետրոսյանը, ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության պետ Մ.Դուրյանը, ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական
վարչության պետ Մ.Համբարձումյանը:

ՕՐԱԿԱՐԳ

**1. Հայաստանի Հանրապետության դատախազության 2016թ.
աշխատանքի արդյունքների ամփոփումը:**

Զեկուցողներ՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ՝ Արմեն
Հարությունյան, Դ.Մելքոնյան, Հ.Ասլանյան:

Արտահայտվեցին՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը, ՀՀ ԿԱ ոստիկանության պետի առաջին տեղակալ Հ.Պողոսյանը, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի տեղակալ Վ.Հովհաննիսյանը, ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ Գ.Բաղդասարյանը:

Լսելով և քննարկելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներ Ա.Հարությունյանի, Դ.Մելքոնյանի և Հ.Ասլանյանի զեկուցումները Հայաստանի Հանրապետության դատախազության 2016 թվականի աշխատանքի արդյունքների մասին՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան նշում է, որ համակարգի մարմինները, իրականացնելով ՀՀ Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով իրենց վերապահված լիազորությունները, ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով, զգալի աշխատանք են կատարել հանրապետությունում օրինականության պահպանման և հանցավորության դեմ համակարգված ու արդյունավետ պայքար կազմակերպելու, քննության որակը բարելավելու, հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության և պատժի անխուսափելիությունն ապահովելու ուղղությամբ:

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման ցուցանիշում էական փոփոխություն չի արձանագրվել: Կոլեգիան արձանագրում է, որ մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով երբեմն խնդիրներ են առաջանում արարքները ճիշտ որակելու առումով:

Այսպես.

Գործնականում որոշակի խնդիրներ են առաջանում արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ի կետով (երկու կամ ավելի անձանց սպանություն) ճիշտ որակելու առումով, ընդ որում, հիմնական դժվարություններն առաջանում են այն դեպքերում, երբ անձի հանցավոր ոտնձգությունը (դիտավորությունը) ուղղված է լինում երկու և ավելի անձանց կյանքից զրկելուն, սակայն արդյունքում մահ է պատճառվում նրանցից միայն մեկին:

Նշվածի վերաբերյալ կոլեգիան դիտարկում է, որ այն դեպքերում, երբ հանցավորի նախնական դիտավորության մեջ (մինչև հանցանք կատարելը) ընդգրկված է լինում երկու կամ ավելի անձանց սպանություն, սակայն նրա հանցավոր գործողությունների արդյունքում կյանքից զրկվում է նրանցից միայն մեկը, ապա արարքը պետք է որակվի միայն ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հետևյալ պատճառաբանությամբ՝ ա) հանցավորը կատարում է մեկ արարք, բ) հանցավորն ունենում է երկու և ավելի անձանց կյանքից զրկելու մեկ միասնական դիտավորություն և նպատակ, գ) հանցավորն օբյեկտիվորեն իրենից կախված անհրաժեշտ հնարավոր բոլոր գործողությունները կատարում է արարքը մինչև վերջ ավարտին հասցնելու ուղղությամբ, դ) հանցավորի հետագա գործողությունները խափանվում են նրա կամքից անկախ հանգամանքներով:

Այն դեպքերում, երբ երկու կամ ավելի անձանց կյանքից զրկելը ընդգրկված չի լինում հանցավորի նախնական դիտավորության մեջ, սակայն նրա հանցավոր գործողությունների արդյունքում տուժողներից մեկը կյանքից զրկվում է, իսկ մյուսը կյանքից չի զրկվում հանցավորի կամքից անկախ հանգամանքներում, հաշվի առնելով հանցավորի դիտավորության ծագման պահին ու ուղղվածությունը, արարքը պետք է որակել ըստ փաստացի վրա հասած հետևանքի, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 34-104-րդ հոդվածի 1-ին մասով:

Եվ վերջապես, այն դեպքերում, երբ հանցավորի գործողություններն իրենց մեջ ընդգրկում են ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մի քանի որակյալ դարձնող հանգամանքներ, օրինակ՝ երբ անձի հանցավոր ոտնձգությունը (նախնական դիտավորությունը) ուղղված է լինում շահադիտական դրդումներով երկու կամ ավելի անձանց կյանքից զրկելուն, սակայն արդյունքում մահ է պատճառվում նրանցից միայն մեկին, ճիշտ կլինի, որպեսզի արարքը որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և համապատասխան որակյալ դարձնող հանգամանքով (բերված օրինակի պարագայում նաև 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով), միաժամանակ՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման և մեղադրական եզրակացության մեջ նկարագրելով գործի փաստական հանգամանքները, այսինքն այն, որ հանցավորի գործողությունների արդյունքում կյանքից զրկվել է տուժողներից միայն մեկը:

Գործնական աշխատանքում որոշակի խնդիրներ են առաջանում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ և 112-րդ հոդվածներով հարուցված քրեական գործերի քննության ընթացքում կապված այդ հանցակազմերի սահմանազատման և ճիշտ որակման հետ:

Նշվածի վերաբերյալ կոլեգիան դիտարկում է, որ ինչպես ՀՀ Վճռաբեկ դատարանի, այնպես էլ տեսական գրականության մոտեցումների համաձայն՝ նշված հանցագործությունների սահմանազատման և ճիշտ որակման նպատակով վարույթն իրականացնող մարմիններն առաջին հերթին պետք է հաշվի առնեն հետևյալ հանգամանքները՝ հանցավորի դիտավորությունը, հանցավոր արարքի կատարման եղանակը, հանցագործություն կատարելիս օգտագործված գործիքները (զենքը), տուժողին հասցված մարմնական վնասվածքների քանակը, բնույթը, տեղակայումը, կենսականորեն կարևոր օրգաններին վնաս հասցնելու հանգամանքը, հանցավորի և տուժողի վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերությունները, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառները, հանցագործության կատարման շարժառիթներն ու նպատակները:

Նկատի ունենալով այն, որ սպանության փորձը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ այս դեպքում հանցավորը գիտակցում է իր գործողության (անգործության) հանրության համար վտանգավորության բնույթը, նախատեսում է մեկ ուրիշի մահը վրա հասնելու հնարավորությունը կամ անխուսափելիությունը և ցանկանում է դրանց առաջացումը, սակայն մահացու հետևանքը վրա չի հասնում նրա կամքից անկախ պատճառներով (զոհի ակտիվ դիմադրություն, այլ անձանց միջամտություն, տուժողին ժամանակին բժշկական օգնություն ցույց տալը և այլ), հետևաբար շատ կարևոր է քննությամբ հստակեցնել մահ-հետևանքի չառաջացման գործում հանցավորի «դերակատարությունը»՝ կամաարտահայտության առկայությունը կամ բացակայությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունից կամովին հրաժարում է համարվում անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը:

Մեջբերված նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործությունից կամովին հրաժարում առկա է, եթե անձը հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը դադարեցնում է՝

ա) վերջնականապես, այլ ոչ թե ավելի նպաստավոր պայմաններում հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով,

բ) ժամանակին, այսինքն՝ մինչև հանցագործության ավարտման պահը,

գ) կամովին՝ իր ազատ կամաարտահայտության արդյունքում, այլ ոչ թե անհաղթահարելի խոչընդոտի հետևանքով,

դ) գիտակցելով հանցագործությունը մինչև վերջ հասցնելու փաստացի հնարավորության առկայությունը:

Գործնականում պակաս ուշադրության է արժանանում քննարկվող իրավիճակում հանցավորի կողմից մահ-հետևանքի առաջացման ուղղությամբ իրականացված գործողությունների բավարարությունը կամ դրանց անբավարարության գիտակցումը, երբ առկա է եղել նման հնարավորություն, ինչը հնարավորություն կտա միաժամանակ հետևություն անել նաև հանցավորի դիտավորության ուղղվածության վերաբերյալ:

Բոլոր դեպքերում հարկ է գնահատականի արժանացնել նաև այն իրավիճակները, երբ հանցավորը որոշակի վնաս պատճառել է տուժողին, սակայն վերջինիս կենդանության ակնհայտ պայմաններում, չունենալով ոչ մի խոչընդոտ և ունենալով իրական հնարավորություն մահ-հետևանքն առաջացնելու ուղղությամբ գործողություններ կատարելու, չի կատարում այդպիսիք:

Կոլեգիան արձանագրում է, որ չբացահայտված բնակարանային գողությունների զգալի մասը կատարվել է հարմարեցված բանալիների և նույնատիպ տեխնիկական միջոցների գործադրմամբ, որը հիմք է տալիս ենթադրելու, որ հնարավոր է դրանք կատարվել են սահմանափակ թվով կայուն հանցավոր խմբերի կողմից, որոնցից թեկուզև մեկի բացահայտումն էականորեն կբարելավի ինչպես բնակարանային գողության, այնպես էլ սեփականության դեմ ուղղված դեպքերով բացահայտման ցուցանիշը:

Բնակարանային գողության դեպքերի բացահայտման ընթացքում բավարար միջոցներ չեն ձեռնարկվում հարևանությամբ բնակվող անձանց, նրանց բարեկամական և ընկերական շրջապատում նմանատիպ հանցագործություններ կատարած անձանց շրջանակը պարզելու ուղղությամբ և այդ մասին հայտնի է դառնում հանցագործությունն այլ եղանակով բացահայտելուց կամ հանցագործին հայտնաբերելուց հետո միայն:

Կոլեգիան արձանագրում է, որ կրկնահանցագործների վերաբերյալ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից և ՀՀ գլխավոր դատախազության ենթակա տարածքային դատախազություններից ստացված տվյալների միջև առկա են էական անհամապատասխանություններ:

Նշվածի վերաբերյալ կոլեգիան դիտարկում է, որ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված տվյալ թվային ցուցանիշները չեն արտացոլում կրկնահանգագործների իրական պատկերը, ինչը նախնական ուսումնասիրություններով ունի երկու պատճառ: Նախ՝ առանձին դեպքերում քննիչները և հետաքննիչները քրեական գործի, նյութի ընթացքը լուծելիս թերի են լրացնում հանցանք կատարած անձի վերաբերյալ լրացվող վիճակագրական քարտերը, իսկ դատախազներն անուշադրության են մատնում այդ հանգամանքը: Երկրորդ՝ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում որպես կրկնահանգագործ հաշվառվում են բացառապես դատապարտվածները, այն անձինք, որոնք կատարել են հանցանք, սակայն տուժողի բողոքի բացակայության կամ կողմերի հաշտության հիմքով ազատվել են քրեական պատասխանատվությունից, որպես կրկնահանգագործ չեն հաշվառվում, ինչը արդարացված չէ:

Կրկնահանգագործության պրակտիկայի ուսումնասիրությունը և վերլուծությունը, վկայելով որդեգրված քրեական քաղաքականության՝ պատժի նպատակների իրացման տեսանկյունից արդյունավետության մասին, հիմք է տալիս եզրակացնելու, որ անհրաժեշտ է շարունակել նախականխիչ միջոցառումների իրականացումը, մասնավորապես, բարձրացնել ոստիկանության բաժիններում գործող պրոֆիլակտիկայի բաժանմունքների աշխատակիցների ակտիվությունն ազատազրկման վայրից վերադարձած անձանց կենցաղի և վարքագծի, նրանց զբաղմունքի ու հակումների նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու առումով:

Նշված հարցի լուծմանն էապես կարող է օգնել նաև կրկնահանգագործների նկատմամբ խիստ պատժողական քաղաքականության իրականացումը:

Կոլեգիան արձանագրել է, որ ինչպես նյութերի նախապատրաստման, այնպես էլ քրեական գործերի նախաքննության ընթացքում ի հայտ են եկել որոշակի խնդիրներ, որոնց լուծումն էական նշանակություն ունի հետաքննության և նախաքննության օրինականության պատշաճ ապահովման համար:

Այսպես.

Հաճախակի են դեպքերը, երբ նախաքննական մարմինների կողմից դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումները կազմվում են թերի, մասնավորապես, դրանցում չեն ներառվում պարտադիր պարզաբանման ենթակա հարցեր կամ ներառվում են այնպիսի հարցեր, որոնք տվյալ փորձաքննությամբ լուծման ենթակա չեն կամ չեն բխում տվյալ գործի փաստական հանգամանքներից, ինչն էլ հետագայում հիմք է հանդիսանում լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունների նշանակման համար:

Նշվածի կապակցությամբ կոլեգիան դիտարկում է, որ դիակի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումներում պետք է պարտադիր զետեղվի հարց, թե դիակի վրա հայտնաբերված մարմնական վնասվածքները (առկայության դեպքում) կենդանի անձանց առողջությանն ինչ ծանրության վնաս են պատճառում, ինչպես նաև, թե անձի մարմնի վրա քանի վնասվածք կա և դրանք քանի ներգործության արդյունքում են պատճառվել:

Բացի այդ, դատաբժշկական փորձաքննություններ նշանակելիս պետք է զերծ մնալ փորձագետներին այնպիսի հարցեր առաջադրելուց, որոնք փորձաքննությամբ լուծման ենթակա չեն:

Կոլեգիան արձանագրում է նաև, որ ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքերով նախապատրաստվող ոչ բոլոր նյութերով է համապատասխան իրավաբանական

գնահատականի արժանանում անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության կամ բացակայության հանգամանքը:

Նշվածի կապակցությամբ կոլեգիան դիտարկում է, որ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու հետևանքով անզգուշությամբ անձի առողջությանը միջին ծանրության կամ ծանր վնաս պատճառվելու փաստերի առթիվ նյութերի նախապատրաստման ընթացքում պետք է պարտադիր քննարկման առարկա դառնա համապատասխան անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության կամ բացակայության հանգամանքը և նյութերով ձեռք բերված տվյալներով պայմանավորված՝ այդ հանգամանքին պետք է տրվի համապատասխան քրեաիրավական գնահատական:

Կոլեգիան փաստում է նաև, որ արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ խափանման միջոց ընտրելու մասին քննիչի որոշումները բովանդակել են ոչ թե կալանավորման համեմատ առավել մեղմ խափանման միջոց ընտրելու, այլ խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության բացակայության վերաբերյալ հիմնավորումներ, ինչը չի կարող ընդունելի համարվել:

Նշվածի կապակցությամբ կոլեգիան դիտարկում է, որ բոլոր այն դեպքերում, երբ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը բովանդակում է խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության բացակայության մասին հիմնավորումներ, պետք է անձի նկատմամբ ընտրված խափանման միջոցը վերացվի և քննիչին ցուցում տրվի խափանման միջոց ընտրելու հիմնավորումներ պարունակող որոշում կայացնելու վերաբերյալ:

Շարունակում է մտահոգիչ մնալ քրեական գործ հարուցելը մերժելու կամ քրեական գործով վարույթը կարճելու (քրեական հետապնդում չիրականացնելու) մասին որոշումների դեմ բերված բողոքներին օրենքով չնախատեսված ցանկացած այլ ձևով, այդ թվում՝ գրությամբ պատասխանելու պրակտիկան:

Նշվածի կապակցությամբ կոլեգիան դիտարկում է, որ գործնական աշխատանքում վարույթն իրականացնող մարմինների կողմից պետք է անշեղորեն պահպանվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, քրեական գործ հարուցելը մերժելու կամ քրեական գործով վարույթը կարճելու (քրեական հետապնդում չիրականացնելու) մասին որոշումներ կայացնելիս այդ փաստաթղթերը դատավարության մասնակիցներին հանձնված լինելու փաստը պետք է պարտադիր հաստատվի նրանց ստորագրությամբ գործին կցված համապատասխան փաստաթղթով:

Կոլեգիան արձանագրում է, որ դատարանները արդարացման դատավճիռներ կայացնելիս հիմնականում հանգել են եզրակացության, որ ամբաստանյալներին մեղսագրված արարքները փոխկապակցված հավաստի ու վերաբերելի ապացույցների բավարար ամբողջությամբ չեն հաստատվել և չեն հիմնավորվել ողջամիտ կասկածից վեր ապացուցողական չափանիշով, առանձին գործերով դատարանների կողմից գնահատվել է պաշտոնեական հանցագործության հետևանքի բացակայություն, նվազ կարևորության պատճառով հանցակազմի բացակայություն, պաշտոնեական կեղծիքի առարկայի՝ պաշտոնական փաստաթղթի բացակայության պատճառով հանցակազմի բացակայություն և այլն:

Կոլեգիան արձանագրում է, որ 2016թ. 4-րդ եռամսյակում կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից էական աշխատանքներ են իրականացվել քրեական գործերի վերահսկողության բնագավառում, մասնավորապես՝ կանոնակարգվել է մարզերի և վարչական շրջանների դատախազությունների հետ աշխատանքը, նշված ժամանակահատվածում վարչության դատախազների կողմից ստուգվել են դեռևս 2016թ. մարտ-ապրիլ ամիսներից ստացված քրեական գործով վարույթը կարճելու մասին 49 և կասեցնելու մասին 72 որոշումների օրինականություն:

Այդուհանդերձ, այդ բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքները դեռևս գոհացուցիչ չեն՝ մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների դատավարական ղեկավարման ներքո քննվող կոռուպցիոն բնույթի 119 քրեական գործից 60-ը քննվում է 6 ամիս և ավելի:

Կոլեգիան արձանագրում է, որ արդարացման դատավճիռների գերակշիռ մասը կայացվել է արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Մի շարք արդարացման դատավճիռներ կայացվել են ինքնիրավչության վերաբերյալ քրեական գործերով: Ընդ որում, եթե 2015թ. արդարացման դատավճիռների ուսումնասիրությունը վեր էր հանել առավելապես այդ հանցակազմի քրեաիրավական գնահատողական հատկանիշների մեկնաբանության խնդիրներ, ապա 2016թ. մինչդատականից տարբերվող դատական գնահատականներ են արձանագրվել դրանց ոչ գնահատողական քրեաիրավական հատկանիշների մեկնաբանության շրջանակներում:

Այսպես, մեկ քրեական գործով (ՍԴ/0168/01/15) արդարացման դատավճռով, դատարանը, մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի քրեաիրավական նորմը, գտել է, որ ինքնիրավչության հանցակազմն առկա է այն դեպքում, երբ անձը ինքնագլուխ կերպով, օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգի խախտմամբ իրացնում է իր իրական կամ ենթադրյալ իրավունքները: Դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ անձն, այսպես կոչված, ինքնիրավչական գործողություններ է կատարում այլ անձի իրական կամ ենթադրյալ իրավունքն իրացնելու համար, ինքնիրավչության հանցակազմն առկա չէ:

Նշվածի կապակցությամբ կոլեգիան դիտարկում է, որ դատարանի վերը նշված մոտեցումն ընդունելի չի կարող համարվել, քանի որ տվյալ դեպքում անձն իրեն անմիջապես չպատկանող իրական կամ ենթադրյալ իրավունքը կամ դրանք վերականգնելու իրավունքը վերագրում է իրեն և կատարում ինքնիրավչական գործողություններ՝ դրանք վերականգնելու համար:

2016թ. կայացված արդարացման դատավճիռներից մեկը վերաբերել է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի դիսպոզիցիայի բլանկետային կարգավորումներին, մասնավորապես, այն հարցին, թե արդյոք «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումները կարող են հանդիսանալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ, թե՛ ոչ: Այդ հարցին առաջին ատյանի դատարանի բացասական պատասխանը չի ընդունվել վերադաս դատարանում: Հակառակ առաջին ատյանի դատարանի իրավական դիրքորոշումներին՝ վերաքննիչ դատարանը իրավացիորեն գտել է, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը հանդիսանում է քննարկվող քրեաիրավական նորմի բլանկետ:

Կոլեգիան արձանագրում է նաև, որ շարունակում է խնդրահարույց մնալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ սառը զենք կրելու հանցակազմի իրավամեկնաբանության խնդիրը: Բանն այն է, որ նշված հանցագործության վերաբերյալ գործերով գործնականում հանդիպում են դեպքեր, երբ քննարկվող հանցակազմի առարկայի սառը զենք հանդիսանալու հանգամանքն ու այն կրելու անթույլատրելիությունն անձի համար առավել քան որոշակի չեն առնվազն այն պատճառով, որ դրանք վաճառվում են հրապարակայնորեն, օգտագործվում են կենցաղում՝ իրենց արտաքին տեսքով և նշանակությամբ անկողմնակալ դիտորդին առերևույթ չվկայելով այն կրելու հանրային վտանգավորությունը: Օրինակ, մեկ քրեական գործով մեղադրողը հրաժարվել է մեղադրանքից՝ նկատի ունենալով, որ ամբաստանյալի գոտուն ամրացված՝ սառը զենք համարվող առարկան հնարավոր չէր օգտագործել որպես այդպիսին՝ առանց հատուկ գործիքներով այն առանձնացնելու:

Նշվածի կապակցությամբ կոլեգիան դիտարկում է, որ անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայությունը յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատվի իրավական որոշակիության սկզբունքի համատեքստում՝ բացառելով քրեական հետապնդումը սառը զենք հանդիսացող, սակայն իրենց արտաքին տեսքով և հիմնական նշանակությամբ որպես այդպիսին անմիջապես օգտագործելու հնարավորություն չենթադրող առարկաններն ապօրինաբար կրելու համար:

Կոլեգիան արձանագրում է, որ իրավական տարամեկնաբանություններ են առկա նաև ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածով նախատեսված՝ բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու հանցակազմի հատկանիշների դեպքում: Քննարկվող հանցակազմի մեկնաբանությունները հատկապես վիճահարույց են հանցակազմի օբյեկտի, իսկ ավելի կոնկրետ՝ վնասվող հասարակական հարաբերությունների սուբյեկտի կապակցությամբ: Նշվածի կապակցությամբ կոլեգիան դիտարկում է, որ քրեաիրավական պաշտպանության է ենթակա բացառապես բնակարանի նկատմամբ սեփականության կամ գրանցված այլ իրավունք ունեցող մարդու բնակարանի անձեռնմխելիության իրավունքը՝ այդ կերպ բացառելով իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող բնակարանների և բնակարանում առանց որևէ իրավաբանական հիմքի բնակվող անձանց բնակարանի անձեռնմխելիության քրեաիրավական պաշտպանությունը:

2016թ. արդարացման դատավճիռների մեջ նկատելի կշիռ են ունեցել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով քննվող քրեական գործերով արդարացման դատավճիռները: Այս գործերով արդարացման դատական ակտերի հիմքում հանցագործության հատուկ սուբյեկտի հատկանիշների ապացուցման խնդիրներն են:

Կոլեգիան արձանագրում է նաև, որ շարունակում են խնդրահարույց մնալ արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական հատկանիշների միատեսակ մեկնաբանության խնդիրները: Հատկապես առանձնանում են սուտ մատնության և սուտ ցուցմունք տալու հանցակազմերի դատական մեկնաբանությունները՝ կապված այդ հանցակազմերին առնչվող քրեադատավարական կարգավորումների հետ: Խնդիրն ուշագրավ է նաև այն պատճառով, որ ինչպես սուտ մատնության, այնպես էլ սուտ ցուցմունք տալու հանցակազմերը մեկնաբանվել են ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում, որը, սակայն, առանձին հարցերի լուծումներ չի նախատեսում կամ այդ լուծումները գործնականում պատշաճ չեն իրացվում:

Այսպես, սուտ ցուցմունք տալու վերաբերյալ գործերով դատարանների կողմից երբեմն խիստ հայեցողական գնահատականներ են տրվում այն հարցին, թե ցուցմունքը, որն առաջին գործով դատավճռով դիտվել է որպես ոչ արժանահավատ, ունեցել է արդյոք նշանակություն տվյալ գործով, թե ոչ: Նշվածի կապակցությամբ կոլեգիան դիտարկում է, որ դատական մեկնաբանություններում նկատվող այն մոտեցումը, որ եթե այդ ցուցմունքն անարժանահավատ դիտելու պայմաններում մեղադրական դատավճիռ է կայացվել, ուրեմն այն գործի լուծման համար նշանակություն չի ունեցել, անընդունելի է և նույնիսկ հակասում է սուտ ցուցմունք տալու հանցակազմի նախադեպային մեկնաբանություններին: Բանն այն է, որ եթե ցուցմունքի սուտ լինելը ենթակա է դատական գնահատման, ուրեմն այն բոլոր դեպքերում դատարանի կողմից սուտ կարող է դիտվել միայն եթե դատավճռով հաստատվել են ցուցմունքով նշված փաստերին չհամապատասխանող փաստեր, որպիսի հանգամանքը չի բացառում դրա նշանակությունը տվյալ գործի լուծման համար: Գործով տուժողի ցուցմունքը բոլոր դեպքերում չի կարող գնահատվել որպես գործի լուծման համար նշանակություն չունեցող, թեև այն այդպիսին գնահատվել է մեկ գործով արդարացման դատավճռով:

Համադրելի քրեադատավարական նորմերի կիրառման ընթացքում թույլ տրված խախտումների գնահատմամբ արդարացման դատավճիռ է կայացվել սուտ մատնության վերաբերյալ մեկ քրեական գործով: Հատկանշական է, որ արդարացման դատավճռում իրավական դիրքորոշումներ են արտահայտվել քննարկվող հանցակազմի դեռևս վաղուց վիճահարույց այն հարցի վերաբերյալ, թե արդյոք սուտ մատնության դեպքի առթիվ քրեական գործով վարույթ սկսելու համար պարտադիր պայման է սուտ մատնությամբ հայտնված արարքի վերաբերյալ վերջնական որոշման առկայությունը: Առաջին ատյանի դատարանի այն դիրքորոշումները, որ սուտ մատնության վերաբերյալ գործ հարուցելու համար անհրաժեշտ է նախ համապատասխան դատավարական որոշմամբ բացառել այն հանցագործության փաստը, որի վերաբերյալ հաղորդում է տրվել, վերաքննիչ դատարանի կողմից չեն ընդունվել: Վերաքննիչ դատարանը, համաձայնելով, որ սուտ մատնության համար անձի դատապարտումը հնարավոր է նրա հաղորդմամբ հայտնված դեպքը բացառելուց հետո, գտել է, որ այն բացառելու մասին դատավարական որոշումն անհրաժեշտ է ոչ թե քրեական գործ հարուցելու, այլ սուտ մատնության համար անձին դատապարտելու համար:

Նույն՝ փոխկապակցված քրեադատավարական իրավունքի նորմերի պահանջների խախտման վերաբերյալ հիմնավորումներով կայացվել է արդարացման դատավճիռ նաև ցուցմունք տալուց հրաժարվելու վերաբերյալ գործով՝ փաստելով, որ ցուցմունք տալուց հրաժարվելու մասին արձանագրությունը կազմվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ և փաստացի հարցաքննություն չի սկսվել, անձին նրա իրավունքները չեն պարզաբանվել, չի նախազգուշացվել և այդ կապակցությամբ պատշաճ արձանագրություն չի կազմվել:

Ինչպես հանցակազմի առանձին հատկանիշներն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ հանցակազմի բացակայության հիմքով, այնպես էլ հանցագործությանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով, արդարացման դատավճիռների հիմքում ապացույցների բավարարության գնահատման կապակցությամբ մինչդատական և դատական վարույթն իրականացնող մարմինների դիրքորոշումների տարբերությունն է: Ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկայի ուսումնասիրությունը, արդարացման դատավճիռների

հիմքում դրված՝ գործով ձեռք բերված ապացույցների դատական գնահատականները ոչ միշտ են անընդունելի:

Կոլեգիան արձանագրում է, որ արդարացման դատավճիռների հիմքում ընկած ամենամտահոգիչ պատճառները մինչդատական վարույթում թույլ տրված քրեադատավարական օրենքի էական խախտումներն են: Օրինակ, մեկ քրեական գործով արդարացման դատավճիռ կայացնելիս արձանագրվել է խուզարկության կատարման կարգի էական խախտում, որն արտահայտվել է այն բնակարանից հայտնաբերված ռազմամթերքը ապօրինաբար պահելը անձին մեղսագրելով, որտեղ խուզարկություն կատարելու թույլտվություն չի տրվել և կից բնակարանում թույլատրված խուզարկության շրջանակներում անձը ռազմամթերքը ներկայացրել է կամովին:

Ինքնուրույն ու լրջագույն խնդիր է այլ պետություններից վարույթների փոխանցման կարգով ստացված քրեական գործերով մեղադրանքի պաշտպանությունը: Բանն այն է, որ դեռևս պայմանավորվող պետության տարածքում դատական քննության փուլում քննված և քրեական հետապնդումը շարունակելու համար ստացված քրեական գործերով վարույթի կարգը, դրանով մեղադրանքի պաշտպանության հարցերը պատշաճ կարգավորված չեն, ինչի արդյունքում դրանք վարույթ ընդունելու հարցերը դառնում են բարդ քննարկումների առարկա՝ հանգեցնելով դատավարական գործընթացի հապաղումների: Ստացված քրեական գործերի ուսումնասիրությունները թույլ են տալիս պնդել նաև, որ դրանցով դատավարական փաստաթղթերը պատշաճ պատճենահանված չեն լինում և դրա կազմակերպումը ՀՀ-ում տևում է ամիսներ:

Իրավական կարգավորումների բացակայության պատճառով խնդրահարույց է հատկապես այդ գործերով դատական քննության սահմանները որոշող դատավարական փաստաթղթերի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու հարցը. շատ գործերով բացակայում են մեղադրական եզրակացությունները կամ նման դատավարական փաստաթղթերը չեն համապատասխանում ներպետական դատավարական օրենքով սահմանված պահանջներին:

Առավել խնդրահարույց է ՀՀ դատարանում դրա քննության ընթացքում ապացույցների հետազոտման այնպիսի հնարավորությունը, որը կապահովեր նաև դատավարությանը մասնակցող անձանց հիմնարար դատավարական իրավունքները: Այս գործերով հիմնական խնդիրը հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման անհնարինությունն է, որը պայմանավորված է նաև հեռակապի միջոցով համապատասխան դատական գործողությունների կատարման հնարավորությունների պատշաճ իրավակարգավորումների բացակայությամբ: Ավելին, նշված գործերով ապացույցները շատ դեպքերում չեն համապատասխանում թույլատրելիության, վերաբերելիության, արժանահավատության և իրենց համակցության մեջ՝ գործի լուծման համար բավարարության չափանիշներին: Շատ դեպքերում վարույթը փոխանցված քրեական գործերով արձանագրվում են նաև իրեղեն ապացույցների բացակայության, կոնկրետ ապացույցը ձեռք բերելիս թույլ տրված քրեադատավարական օրենքի խախտումներ:

Կոլեգիան արձանագրում է, որ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարման դեպքերի զգալի մասը պայմանավորված է դատարանում ապացույցների հետազոտման արդյունքներով,

որոնք մեղադրողի մոտ վերջնական դատավարական դիրքորոշում են ձևավորում մեղադրանքն անհիմն, տվյալ դեպքում՝ դրա փաստական կողմն ապացուցված չլինելու մասին:

Պատժողական քաղաքականության հարցը քննարկելիս կոլեգիան արձանագրում է, որ խնդրահարույց է ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով պատժողական պրակտիկան: Ընդգծելով արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների, այդ թվում՝ սուտ մատնության հանրային բարձր վտանգավորությունը, կարևորելով դրանց դեմ պայքարը նաև պետական իշխանության, արդարադատություն իրականացնող կամ դրան մասնակցող մարմինների բարձր հեղինակության, նրանց նկատմամբ հարգանքի միջավայրի ձևավորման տեսանկյունից, կոլեգիան դիտարկում է, որ դրանց դեմ ոտնձգող հանցագործությունների դեմ պայքարը պետք է որակապես փոփոխվի: Այս մոտեցումը հատկապես պետք է կիրառվի սուտ մատնության որակյալ տեսակների դեպքում, որոնցից առավել տարածված են անձին ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելով կամ մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելով կատարված սուտ մատնությունները:

Նշված հանցագործությունների վերաբերյալ գործերով պատժողական խիստ մոտեցումը, որպես կանոն, կիրառվել է այն հանգամանքի հաշվառմամբ, թե արդյոք սուտ մատնության արդյունքում որևէ անձի համար վրա են հասել անբարենպաստ հետևանքներ թե ոչ, օրինակ՝ անձը կալանավորվել է, թե ոչ: Կարևորելով այդ մոտեցման շարունակականության ապահովման անհրաժեշտությունը, կոլեգիան դիտարկում է, որ սուտ մատնության վերաբերյալ գործերով քրեական քաղաքականությունը պետք է փոփոխվի՝ խստացման առումով: Այս մոտեցումը նկատի է ունենում նաև գործնականում միանգամայն հնարավոր և խիստ վտանգավոր այնպիսի պրակտիկայի ձևավորումը, ինչպիսին ավելի ծանր հանցագործության փաստի քողարկումն է սուտ մատնության վերաբերյալ գործերով, որին մեղմ պատժողական պրակտիկան էապես նպաստում է: Այն կարող է հանգեցնել վիճակի, երբ իրականում հանցանք կատարած անձի հետ ի վերջո ձեռք բերված պայմանավորվածությամբ անձը հայտնում է իր կողմից սուտ մատնություն կատարելու մասին, դրա համար արժանանում մեղմ պատժի կամ ազատվում դրանից՝ այդ կերպ ապահովելով իրականում կատարված հանցագործության քողարկումն ու այն կատարած անձանց քրեական պատասխանատվությունից ազատելը:

Կոլեգիան արձանագրում է նաև, որ անհրաժեշտություն կա խստացնել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով, 177-րդ հոդվածի 3-րդ մասով, 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված և կոռուպցիոն հանցագործությունների համար պատժողական քաղաքականությունը:

Անընդունելիորեն շարունակում է տարբերակված մնալ լրացուցիչ պատիժներ նշանակելու դատական պրակտիկան: Միակ հանցատեսակը, որով, որպես կանոն, նշանակվում է լրացուցիչ պատիժ, ՃԵԿ-ի խախտման դեպքերն են: Իսկ որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու հետ անմիջականորեն կապված մի շարք հանցագործությունների վերաբերյալ գործերով շատ դեպքերում այդպիսի պատիժ չի նշանակվում:

Այդուհանդերձ, առանձին հանցագործությունների համար լրացուցիչ պատիժ նշանակելու խնդիրները ոչ թե իրավակիրառ, այլ իրավակարգավորման ոլորտին են պատկանում:

Այսպես.

ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով լրացուցիչ պատիժ սահմանված չէ, ուստի, դրանով նախատեսված հանցանք կատարած անձը չի կարող որոշակի ժամկետով զրկվել բժշկական օգնություն կամ սպասարկում իրականացնելու իրավունքից: Այլ կերպ ասած՝ բժշկական օգնություն կամ սպասարկում իրականացնող անձի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունք ցուցաբերելու հետևանքով տուժողի առողջությանը միջին ծանրության կամ ծանր վնաս պատճառելուց հետո, այդ արարքի համար դատապարտվելու դեպքում էլ վերջինս պահպանում է նույն գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

Միաժամանակ, ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի իրավակարգավորումները վկայում են, որ այն ոչ միայն չի կարգավորել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավակարգավորումից բխող խնդիրը, այլև այն տարածել է նաև գործող օրենսդրությամբ կարգավորված իրավիճակի վրա՝ բժշկական սխալի և հասարակ ու որակյալ տեսակի դեպքում չնախատեսելով որոշակի գործունեությամբ զբաղվելու կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը: Մեր համոզմամբ քննարկվող հանցատեսակի համար որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկումը որպես պատիժ չնախատեսելու մոտեցումն անտեսում է քննարկվող հանցագործության «մասնագիտական» բնույթը և դրանով պայմանավորված՝ այդ հանցագործության հիմքում ընկած պատճառները չեզոքացնելուն ուղղված քրեաիրավական ներգործության միջոցների գործադրման անհրաժեշտությունը: Սույն մոտեցումը հիմնվում է նաև քննարկվող հանցագործության համար լրացուցիչ պատիժ նշանակելու նպատակների մասին ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վրա:

Կոլեգիան արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունն ուղիղ համեմատական է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածով հռչակված կյանքի իրավունքի երաշխավորմանը: Տեղին է մեջբերել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում բազմիցս արտահայտված այն մոտեցումը, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը պարտավորեցնում է պետություններին երաշխավորել կյանքի իրավունքը՝ իրավախախտումները նախագգուշացնելու, կանխելու, խափանելու և դրանց համար պատիժ սահմանելու նպատակով քրեական իրավունքի արդյունավետ դրույթներ սահմանելու միջոցով:

Ընդ որում, կյանքի իրավունքը երաշխավորելու՝ պետության պոզիտիվ պարտավորության նկատմամբ առավել խիստ չափանիշներ են ներկայացվում այն դեպքում, երբ մասնագիտական պարտականությունների նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունք ցուցաբերելու հետևանքով բժշկական օգնություն կամ սպասարկում իրականացնող անձի կողմից դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում, առողջության վերականգնման և բժշկական սպասարկման պարտականություն կրող, պետական կամ պետության կողմից լիցենզավորված առողջապահական հաստատությունում գործունեություն ծավալող անձի գործողությունների արդյունքում է վտանգվում մարդու կյանքն ու առողջությունը:

Հետևաբար կոլեգիան արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեմ պայքարի ընդհանուր քրեական քաղաքականությունը, ինչպես նաև այդ հանցակազմը սահմանող քրեաիրավական նորմերի հետագա իրավական կատարելագործումը պետք է խստորեն հաշվի առնի դրա բնույթը, հանրային

վտանգավորությունը և այդ դեպքում պատժի նպատակների իրացումն ապահովելու առանձնահատկությունները՝ հիմք դառնալով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորության անշեղ կատարման համար:

Վերը նշված նկատառումներից ելնելով, կոլեգիան դիտարկում է, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի ակնկալվող քննարկումներում անհրաժեշտ է բարձրացնել 187-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված սանկցիայով «անձին որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում» պատժատեսակը որպես լրացուցիչ պատիժ սահմանելու անհրաժեշտությունը:

Մինչև ՀՀ քրեական նոր օրենսգրքի ընդունումը, որպես ժամանակավոր իրավիճակային լուծում կարող է հանդիսանալ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով, քրեական գործերը դատարան ուղարկելիս կամ մեղադրական դատավճիռներն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, ամբաստանյալների լիազորությունների կասեցման և մասնագիտական վերապատրաստման հարցը բարձրացնելու նպատակով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով, պարտադիր կերպով ՀՀ առողջապահության նախարարություն միջնորդագիր ներկայացնելը:

Կոլեգիան արձանագրում է, որ իրավական կարգավորման անհստակությունները պայմանավորել են նաև առանձին հանցագործությունների համար լրացուցիչ պատիժ նշանակելու անհնարինության վերաբերյալ հետևյալ մոտեցումը:

Այսպես,

ՀՀ քրեական օրենսգրքի «Հատուկ մասով» նախատեսված մի շարք հոդվածների սանկցիաներում լրացուցիչ պատիժը, ընդ որում՝ պարտադիր լրացուցիչ պատիժը, նախատեսված է այնպիսի ձևակերպմամբ, որը տպավորություն է ստեղծում, որ այն կարող է նշանակվել միայն երկրնտրելի հիմնական պատիժներից միայն մեկը նշանակելու դեպքում: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի առաջին մասի սանկցիան ունի հետևյալ ձևակերպումը. պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը երկուհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա: Այս ձևակերպումը հիմք է տվել դատական պրակտիկայում մոտեցումների առ այն, որ լրացուցիչ պատիժը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, կարող է նշանակվել բացառապես այն դեպքում, եթե որպես հիմնական պատիժ նշանակվել է ազատազրկումը:

Այսպես, Երևան քաղաքի դատախազության կողմից դատարան ուղարկված՝ **Հովսեփ Հովակիմյանի** վերաբերյալ քրեական գործով, առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև 45-րդ հոդվածի 10-րդ կետի իրավակարգավորումները, համաձայն որի՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով, ինչպես նաև «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը, փաստել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սանկցիայի տառացի մեկնաբանմամբ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարող

է նշանակվել բացառապես ազատագրկման ձևով նշանակված հիմնական պատժի հետ, քանի որ մյուս պատժատեսակից՝ տուգանքից լրացուցիչ այդ պատժատեսակը տարանջատված է «կամ» շաղկապով: Դատարանը տվյալ հետևության հանգել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասով, 199.1 հոդվածի 2-րդ մասով և 315.2-րդ հոդվածներով սահմանված պատժամասերի վերլուծության արդյունքներով, որոնցում օրենսդիրը կիրառել է օրենսդրական տեխնիկայի առավել հստակ կանոն, մասնավորապես՝ այդ լրացուցիչ պատժատեսակը սահմանելով առանձին-առանձին նախատեսած բոլոր հիմնական պատիժների հետ: Դատարանը փաստում է, որ իրավական այդ անորոշությունը, ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի ուժով, պետք է մեկնաբանվի հօգուտ ամբաստանյալների, այսինքն՝ տուգանք նշանակելու դեպքում այդ լրացուցիչ պատիժը գործով ամբաստանյալի նկատմամբ չի կարող նշանակվել:

Այնինչ, ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայի նկարագրությունը դիտարկելով «Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 40-րդ կետի իրավակարգավորման լույսի ներքո, անհրաժեշտ է փաստել, որ տվյալ իրավիճակում կիրառելի կամ ոչ կիրառելի նորմը լրացուցիչ պատիժը նախատեսող նորմն է: Որպես տվյալ նորմի կիրառման, այսինքն՝ լրացուցիչ պատիժ նշանակելու պայման, հանդես է գալիս հիմնական պատիժը, այնքանով, որքանով ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի ուժով, լրացուցիչ պատիժն առանց հիմնական պատժի նշանակվել չի կարող: ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված հիմնական պատիժները երեքն են՝ տուգանք, կալանք և որոշակի ժամկետով ազատագրկում, որոնք օրենսդրական ձևակերպման մեջ միմյանցից տարանջատված են «կամ» շաղկապով: Նշանակում է, որ հենց իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ կետի ուժով, այնքանով, որքանով ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված լրացուցիչ պատժի նշանակման երեք պայմանները տարանջատված են «կամ» շաղկապով, հետևաբար նշված լրացուցիչ պատիժը կարող է նշանակվել այդ պայմաններից որևէ մեկի առկայության, այսինքն՝ դրանցից յուրաքանչյուրի նշանակման դեպքում:

Ելնելով վերոգրյալից՝

ԿՈՆԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին՝

1) ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ի կետով (երկու կամ ավելի անձանց սպանություն) արարքների որակման առումով պետք է ձևավորվի հետևյալ պրակտիկան.

ա) այն բոլոր դեպքերում, երբ հանցավորի նախնական դիտավորության մեջ (մինչև առաջին անձի սպանությունը) ընդգրկված է լինում երկու կամ ավելի անձանց սպանությունը, սակայն նրա հանցավոր գործողությունների արդյունքում իր կամքից անկախ

հանգամանքներում կյանքից զրկվում է նրանցից միայն մեկը, ապա արարքը պետք է որակվի միայն ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով,

բ) այն դեպքերում, երբ երկու կամ ավելի անձանց կյանքից զրկելը ընդգրկված չի լինում հանցավորի նախնական դիտավորության մեջ, սակայն նրա հանցավոր գործողությունների արդյունքում տուժողներից մեկը կյանքից զրկվում է, իսկ մյուսը կյանքից չի զրկվում հանցավորի կամքից անկախ հանգամանքներում, հաշվի առնելով հանցավորի դիտավորության ուղղվածությունը, արարքը պետք է որակել ըստ փաստացի վրա հասած հետևանքի, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 34-104-րդ հոդվածի 1-ին մասով,

գ) այն բոլոր դեպքերում, երբ հանցավորի գործողություններն իրենց մեջ ընդգրկում են ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մի քանի որակյալ դարձնող հանգամանքներ, օրինակ՝ երբ անձի հանցավոր ոտնձգությունը (նախնական դիտավորությունը) ուղղված է լինում շահադիտական դրդումներով երկու կամ ավելի անձանց կյանքից զրկելուն, սակայն արդյունքում մահ է պատճառվում նրանցից միայն մեկին, արարքը պետք է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և համապատասխան որակյալ դարձնող հանգամանքով (բերված օրինակում՝ նաև 8-րդ կետով)՝ միաժամանակ անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման և մեղադրական եզրակացության մեջ նկարագրելով գործի փաստական հանգամանքները, այսինքն այն, որ հանցավորի գործողությունների արդյունքում կյանքից զրկվել է տուժողներից միայն մեկը:

2) ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ և 112-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների սահմանազատման և ճիշտ որակման համար էական նշանակություն ունի ոչ միայն հանցավորի դիտավորության, հանցավոր արարքի կատարման եղանակի, հանցագործություն կատարելիս օգտագործված գործիքների, տուժողին հասցված մարմնական վնասվածքների քանակի, բնույթի, տեղակայման, կենսականորեն կարևոր օրգաններին վնաս հասցնելու, հանցավորի և տուժողի վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերությունների, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառների, հանցագործության կատարման շարժառիթների ու նպատակների պարզումը, այլ նաև՝ մահ-հետևանքի չառաջացման գործում հանցավորի «դերակատարությունը»՝ կամաարտահայտության առկայությունը կամ բացակայությունը:

Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում վերը նշված հոդվածներով քննվող քրեական գործերով, ի թիվս այլնի, անհրաժեշտ է քննության առարկա դարձնել նաև մահ-հետևանքի չառաջացման գործում հանցավորի «դերակատարությունը»՝ կամաարտահայտության առկայությունը կամ բացակայությունը:

3) Բոլոր այն դեպքերում (և՛ թիվ 2 մատյանում, և՛ 1-ին գրքում գրանցված դեպքերով), երբ անձը մարմնական վնասվածք ստանալու կապակցությամբ դիմել է համապատասխան բժշկական հաստատություն և հրաժարվում է դատաբժշկական փորձաքննության ենթարկվելուց, դեպքի առթիվ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նյութեր նախապատրաստելու անհրաժեշտությունը և քրեական գործ հարուցելու հիմքի բավարարությունը պարզելու նպատակով, կոնկրետ հանգամանքում նշված մարմնական վնասվածքը ստանալու հնարավորությունն անհրաժեշտ է պարզել անձի բժշկական սպասարկումն իրականացրած մասնագետի բացատրությամբ,

անհրաժեշտության դեպքում՝ տվյալ բժշկական հիմնարկում կազմված բժշկական փաստաթղթերով նշանակել դատաբժշկական նոր փորձաքննություն:

4) Ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու հետևանքով անզգուշությամբ անձի առողջությանը միջին ծանրության կամ ծանր վնաս պատճառվելու փաստերի առթիվ նյութերի նախապատրաստման ընթացքում պարտադիր քննարկման առարկա դարձնել համապատասխան անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության կամ բացակայության հանգամանքը և, նյութերով ձեռք բերված տվյալներով պայմանավորված, այդ հանգամանքին տալ համապատասխան քրեաիրավական գնահատական:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու հետևանքով մարմնական վնասվածք ստացած անձի՝ բողոք չունենալու հանգամանքն իրավաբանական նշանակություն կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ կհիմնավորվի, որ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու հետևանքով անձի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է միջին ծանրության կամ ծանր վնաս, հետևաբար անթույլատրելի է նշված դեպքերով նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին ոչ արդարացնող հիմքով որոշում կայացնելն այն դեպքում, երբ պարզ չէ, թե ինչ ծանրության վնաս է պատճառվել անձի առողջությանը ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում:

5) Դիակի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումներում զետեղել հարց, թե դիակի մարմնին հայտնաբերված մարմնական վնասվածքները (առկայության դեպքում) կենդանի անձանց առողջությանն ինչ ծանրության վնաս են պատճառում, ինչպես նաև, թե անձի մարմնի վրա քանի վնասվածք կա և դրանք քանի ներգործության արդյունքում են պատճառվել: Միաժամանակ, փորձաքննություններ նշանակելիս զերծ մնալ փորձագետներին այնպիսի հարցեր առաջադրելուց, որոնք փորձաքննությամբ լուծման ենթակա չեն կամ դրանք ձևակերպել ամբողջական, տվյալ գործի փաստական հանգամանքներից բխող:

6) Ապահովել, որպեսզի խափանման միջոց ընտրելու մասին քննիչի որոշումները բովանդակեն ոչ թե խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության բացակայության, այլ կալանավորման համեմատ առավել մեղմ խափանման միջոց ընտրելու հիմնավորումներ: Բոլոր այն դեպքերում, երբ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը բովանդակում է խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության բացակայության մասին հիմնավորումներ, վերացնել նշված որոշումը և քննիչին ցուցում տալ՝ խափանման միջոց ընտրելու հիմնավորումներ պարունակող որոշում կայացնելու վերաբերյալ:

7) Հափշտակության վերաբերյալ գործեր քննելիս ապահովել, որպեսզի առանց դատարանի համապատասխան որոշման տրամադրվի կանխիկացման կետերի տեսագրությունները՝ նկատի ունենալով, որ կանխիկացման կետերի տեսագրությունները բանկային գաղտնիք չեն հանդիսանում:

8) Ապահովել, որպեսզի հանցանք կատարած անձի վերաբերյալ լրացվող վիճակագրական քարտերում արտացոլվեն անձի վերաբերյալ բոլոր (այդ թվում՝ դատվածություն ունենալու) տվյալները, հետագայում կրկնահանցագործների վերաբերյալ ՀՀ ոստիկանությունում պատշաճ հաշվառում իրականացնելու նպատակով:

9) Բացառել քրեական գործ հարուցելը մերժելու կամ քրեական գործով վարույթը կարճելու (քրեական հետապնդում չիրականացնելու) մասին որոշումների դեմ բերված բողոքներին օրենքով չնախատեսված ցանկացած այլ ձևով, այդ թվում՝ գրությամբ պատասխանելու պրակտիկան:

Ապահովել գործնականում վարույթն իրականացնող մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների կատարումը: Ստուգել, որպեսզի քրեական գործ հարուցելը մերժելու կամ քրեական գործով վարույթը կարճելու (քրեական հետապնդում չիրականացնելու) մասին որոշումներ կայացնելիս այդ փաստաթղթերը դատավարության մասնակիցներին հանձնված լինելու փաստը հաստատվի նրանց ստորագրությամբ գործին կցված համապատասխան փաստաթղթով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հիշյալ նորմի պահանջների խախտում հայտնաբերելու դեպքում կիրառել դատախազական ներգործության համապատասխան միջոցներ:

10) Ապահովել, որպեսզի խուզարկություններ կատարելու, հեռախոսային խոսակցությունների վերծանումներ ստանալու, որպես խափանման միջոց կալանք ընտրելու մասին միջնորդությունները համապատասխանեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին:

11) ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածը մեկնաբանելիս նկատի ունենալ, որ բնակարանի անձեռնխելիությունը խախտելու հանցակազմն առկա է բոլոր այն դեպքերում, երբ հանցավորն ապօրինաբար, մարդու կամքին հակառակ մուտք է գործել նրա կողմից զբաղեցված բնակարան՝ անկախ այդ բնակարանի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքից կամ այլ իրավունքների պետական գրանցումից:

12) ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածը մեկնաբանելիս առաջնորդվել այն մոտեցմամբ, որ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոններ սահմանող և վերջինիս համար բլանկետային հանդիսացող նորմեր են նաև «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի նորմերը:

13) ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածը մեկնաբանելիս առաջնորդվել այն մոտեցմամբ, որ ինքնիրավչության հանցակազմն առկա է նաև այն դեպքերում, երբ անձը օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ ինքնագլուխ կերպով իրացնում է ոչ միայն իր սեփական, այլ նաև մեկ ուրիշի՝ հանցավորի համոզմամբ առկա համաձայնությամբ վերջինիս իրական կամ ենթադրյալ իրավունքը՝ որպես կատարողի համար ենթադրյալ իրավունք, եթե բացակայում են շորթման հատկանիշները:

14) Անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված ապօրինաբար սառը զենք կրելու հանցակազմի առկայությունը յուրաքանչյուր դեպքում գնահատել իրավական որոշակիության սկզբունքի համատեքստում՝ բացառելով քրեական հետապնդումը սառը զենք հանդիսացող, սակայն իրենց արտաքին տեսքով և հիմնական նշանակությամբ որպես այդպիսին անմիջապես օգտագործելու հնարավորություն չենթադրող առարկաներն ապօրինաբար կրելու համար:

15) ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված սուտ մատնության վերաբերյալ գործերով դատավարական ղեկավարման շրջանակներում ապահովել, որպեսզի մեղադրական եզրակացությամբ գործը դատարան ուղարկվի բացառապես անձի կողմից հայտնված հանցագործության դեպքը բացառող դատավարական որոշում կայացնելուց հետո:

16) ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալու կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու հանցակազմի մեկնաբանության շրջանակներում արարքի՝ գործի լուծման համար նշանակություն ունենալու հանգամանքը դիտարկել տրված ցուցմունքի, եզրակացության կամ կատարված թարգմանության հնարավոր դատավարական արժեքի համատեքստում՝ զերծ մնալով այն մեկնաբանությունից, որ եթե դատարանն առանց այդ ցուցմունքի, եզրակացության կամ թարգմանության կայացրել է դրանց հակառակ դատավճիռ, ուրեմն այն չէր կարող գործով նշանակություն ունենալ:

17) Բացառել սուտ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու համար քրեական հետապնդումն այն դեպքերում, երբ անձի հարցաքննությունը, որի ընթացքում սուտ ցուցմունք է տրվել կամ անձը հրաժարվել է ցուցմունք տալուց, կատարվել է քրեադատավարական օրենքի էական խախտմամբ:

18) ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով, քրեական գործերը դատարան ուղարկելիս կամ մեղադրական դատավճիռներն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, ամբաստանյալների լիազորությունների կասեցման և մասնագիտական վերապատրաստման հարցը բարձրացնելու նպատակով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով միջնորդագիր ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարություն:

19) ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրական ճառում պատիժներ միջնորդելիս առաջնորդվել այն մոտեցմամբ, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես լրացուցիչ պատիժ կարող է նշանակվել հիմնական պատիժներից յուրաքանչյուրի հետ համակցությամբ:

20) Խստացնել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով, 177-րդ հոդվածի 3-րդ մասով, 242-րդ հոդվածի 2-րդ մասով, 333-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված և կոռուպցիոն հանցագործությունների համար պատժողական քաղաքականությունը:

21) Դատական քննության արագացված կարգի կիրառման դեմ առարկելիս մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշման մեջ պատճառաբանել նման առարկությունը՝ հաշվի առնելով.

- արագացված կարգ կիրառելու իրավական պայմանների կամ հիմքերի առկայությունը կամ բացակայությունը,

- մեղադրյալի կողմից հանցագործության բացահայտմանը և քննությանն աջակցելը,

- կատարած արարքի համար զղջալը, հանցագործության հետևանքով պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը,

- տուժողի դիրքորոշումը,

- հանցագործության կամ այն կատարած անձի հանրային վտանգավորությունը բնութագրող այլ հանգամանքները,

- մեղադրյալի տարիքը:

Դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ, որպես կանոն, առարկել նաև.

- կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով,

- այն գործերով, որոնցով առաջադրված մեղադրանքին առնչվող այլ փաստական հանգամանքները քննության առարկա են մեկ այլ քրեական գործով և ողջամտորեն կարող են պայմանավորել տվյալ գործով մեղադրանքի փոփոխություն,

- այն գործերով, որոնցով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը մեղմացման առումով փոփոխվել է մինչդատական վարույթում,

- հանցագործությունների ռեցիդիվի դեպքում:

22) Ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը դատարանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով փոփոխելու, նրան առաջադրված մեղադրանքը մեղմացման առումով վերաորակում մեղադրական ճառով միջնորդելու, մեղադրանքից հրաժարվելու հիմքեր հայտնաբերելու դեպքում, մինչև նշված դատավարական լիազորություններն իրականացնելը, քրեական գործը քննարկել համապատասխան ոլորտում վերահսկողությունն ապահովող ՀՀ գլխավոր դատախազության վարչությունում:

23) Պետական շահերի պաշտպանության ոլորտում միասնական քաղաքականության մշակման ու իրականացման նպատակով ակտիվացնել համագործակցությունը ՀՀ գլխավոր դատախազության մասնագիտացված վարչության հետ: Աշխատանքային ծրագրերով պարտադիր նախատեսել պետական շահերի պաշտպանության վիճակի ուսումնասիրության հարցեր և հետևողական կատարել դրանք:

24) Բացառել դատարան ներկայացրած հայցադիմումները դատարանների կողմից վարույթ ընդունելը մերժելու կամ դրանք վերադարձնելու պարագայում նոր հայցադիմումներ չներկայացնելու կամ դատական ակտերը չբողոքարկելու դեպքերը: Հետևողական լինել՝ հանցագործությամբ պետությանը պատճառված վնասի առկայության դեպքում քրեական դատավարության կարգով պարտադիր քաղաքացիական հայց հարուցելու, ինչպես նաև քրեական դատավարության կարգով առանց քննության թողնված հայցադիմումներով քաղաքացիական դատավարության կարգով հայցեր ներկայացնելու հարցերում:

25) Ձեռնարկել դատախազական ներգործության միջոցներ՝ յուրաքանչյուր դեպքում հանցագործության պատճառները և դրան նպաստող պայմանները քրեական գործի նախաքննությամբ պարզելու և դրանք վերացնելու ուղղությամբ: Այս առումով հատկապես ակտիվացնել ուսումնական, ինչպես նաև պետական այլ հաստատություններում հանցագործությունների նախականիման և նման հաստատություններում քրեածին միջավայրի բացառման նպատակով իրականացվող աշխատանքները:

26) Վարույթի մասնակիցների իրավունքների պատշաճ պաշտպանությունն ապահովելու նպատակով ավելի հաճախ կազմակերպել վերջիններիս, նրանց ներկայացուցիչների ընդունելություն՝ անհրաժեշտության դեպքում անձամբ նախաձեռնություն ցուցաբերելով:

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանին՝

Դիմել ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խմբին՝ առաջարկելով նախագծի մշակման շրջանակներում.

ա) բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու հանցակազմը ձևակերպել այնպես, որ ապահովվի ոչ միայն մարդուն պատկանող, այլև նրա կողմից օրինական զբաղեցրած, ինչպես նաև իրավաբանական անձին սեփականության իրավունքով պատկանող բնակարանի անձեռնմխելիության քրեաիրավական պաշտպանությունը,

բ) ինքնիրավչության հանցակազմը ձևակերպել այնպես, որ այն ներառի անձի կողմից ոչ միայն իր, այլ նաև մեկ ուրիշի համաձայնությամբ վերջինիս իրական կամ ենթադրյալ իրավունքն օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ ինքնազուլիս կերպով իրացնելը,

գ) բժշկական օգնություն կամ սպասարկում իրականացնողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու, ինչպես նաև որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու հետ կապված բոլոր հանցագործությունների համար (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը և այլն) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը նախատեսել միայն որպես լրացուցիչ պատիժ:

3. ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության և կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությունների պետերին՝

1) կազմել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածում և ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 4-րդ մասի 3-րդ կետերում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենսդրական նախագիծ:

2) Սույն որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետի պահանջների կատարումն ապահովելու նպատակով պատրաստել շրջաբերական նամակ՝ ուղղված հետաքննության և նախաքննության մարմիններին:

3) ՀՀ դատախազության 2017 թվականի երկրորդ կիսամյակի աշխատանքի ծրագրով նախատեսել՝ ամփոփել քրեական գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտում ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ քրեական դատարանների կողմից կայացված որոշումների բողոքարկման ուղղությամբ 2015-2016 թվականների ընթացքում կատարված աշխատանքների վիճակն ու վերաքննիչ և վճռաբեկ բողոքների քննության արդյունքները և ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

4. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետին՝

ՀՀ Կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգում՝ քննչական գործողություններ կատարելու համար նախատեսված սենյակներին ներկայացվող պահանջներ, սնունդ ընդունելուց հրաժարված կալանավորված անձանց և դատապարտյալների հետ իրականացվող բժշկական բնույթի միջոցների իրականացման կարգ և կալանավորված անձանց ու դատապարտյալներին իրենց մոտ ունենալու, հանձնուքներով, ծանրոցներով և փաթեթներով ստանալու կամ ձեռք բերելու համար թույլատրված իրերի, առարկաների ու սննդամթերքի սպառիչ ցանկ սահմանելու վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության առաջարկություններն ուղարկել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչություն:

5. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման և միջազգային իրավական համագործակցության վարչությունների պետերին՝

ուսումնասիրել այլ պետություններից ստացված դատական քննության փուլում քննվող քրեական գործերով մեղադրանքի պաշտպանության պրակտիկան՝ ոլորտում առկա գործնական ու իրավակարգավորման խնդիրները վեր հանելու և համապատասխան առաջարկություններ ներկայացնելու նպատակով: